ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

(ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարի 2015 թվականի նոյեմբերի 6-ի N 1167-Ն հրամանով հաստատված N 1 հավելվածի 1-ին կետի 14-րդ ենթակետով նախատեսված չափորոշիչ)

2016 թվականի ընթացքում մարզի տարածքում արտակարգ իրավիճակների կանխման, դրանց հետևանքների նվազեցման ու վերացման պլանների, ծրագրերի մշակման կազմակերպման և իրականացման վերաբերյալ

Գնահատման չափորոշիչներ	Կատարված աշխատանքները՝ ըստ ենթաչափորոշիչների
1. Մարզի տարածքում արտակարգ իրավիճակների կանխման, դրանց հետևանքների նվազեցման ու վերացման պլանների, ծրագրերի մշակման կազմակերպումը և իրականացումը	1) ա. մարզի տարածքում արտակարգ իրավիճակների կանխման, դրանց հնարավոր հետևանքների նվազեցման ծրագրերի առկայությունը. ՀՀ Վայոց ձորի մարզպետի կողմից հաստատվել է <<Վայոց Ձորի անտառտնտեսություն>> մասնաճյուղի անտառների հակահրդեհային կանխարգելիչ միջոցառումների ծրագիրը: Մարզի 5 (Եղեգնաձոր, Քարագլուխ, Ելփին, Մալիշկա, Շատին) համայնքներ մշակել են արտակարգ իրավիճակների կանխման, դրանց հնարավոր հետևանքների նվազեցման ծրագրեր: 1)բ. մարզի տարածքում արտակարգ իրավիճակների կանխման, դրանց հնարավոր հետևանքների նվազեցման ծրագրերով նախատեսված միջոցառումների իրականացումը . <<Վայոց Ձորի անտառտնտեսություն>> մասնաճյուղի անտառների հակահրդեհային կանխարգելիչ միջոցառումների ծրագրով նախատեսված աշխատանքները հիմնականում կատարվել են: Համայնքների կողմից մշակված ծրագրերից կատարվել են. *Մալիշկայի գյուղական համայնքում՝ սելավատարի

	և համայնքային ճանապարհների ջրահեռացման առուների մաքրում, *Եղեգնաձորի քաղաքային համայնքում՝ Սրկողունք գետի հունի մաքրում, *Ելփինի գյուղական համայնքում՝ սելավատարի մաքրում, *Քարագլխի գյուղական համայնքում՝ ոռոգման մայր առվի մաքրում: Իրականացվել են Արենի–Խաչիկ հանրապետական ճանապարհի քարաթափման վտանգի տակ գտնվող հատվածի վերանորոգման աշխատանքները: Արենի-Խաչիկ հանրապետական ճանապարհի 3 հատվածներում իրականացվել են ոլորանների լայնացման աշխատանքներ: Հիմնանորոգվել է Մ-2-Չիվա-Ռինդ մարզային նշանակության ավտոճանապարհը: Հիմնանորոգվել են Գնդեվազ համայնքի ներհամայնքային փողոցները: Վերանորոգվել են Ջերմուկ քաղաքի Շահումյան փողոցը և հարակից մայթերը: Հիմնանորոգվել է Երևան-Երասխ-Գորիս-Մեղրի-Իրանի սահման միջպետական ավտոճանապարհի վրա գտնվող /կմ159+200/ կամուրջը: 1)գ. քաղաքացիական պաշտպանության մարզային ծառայությունների ստեղծումը և ծառայությունների գործունեության համար անհրաժեշտ փաստաթղթերի առկայությունը. Վայոց ձորի մարզում ստեղծվել և գործում են քաղաքացիական պաշտպանության 9 մարզային ծառայություններ, որոնք ունեն բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը:

	2016 թվականին առևտրի և սննդի մատակարարման ու նյութատեխնիկական մատակարարման ծառայությունները մշակել և հաստատման են ներկայացրել պլանները և կանոնադրությունները: 1)դ. մարզի բնակչության տարահանման պլանների առկայությունը. Մարզի բնակչության տարահանման ճշգրտված պլանը առկա է: 1)ե. մարզի բնակչության պատսպարման պլանների առկայությունը Մարզի բնակչության պատսպարման ճշգրտված պլանը առկա է:

ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՏԻ ԵՎ ՀԳՄ
ՀԱՐՑԵՐՈՎ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ՝ Ն.ՍԻՄՈՆՅԱՆ

18.01.2017թ.